

ծագործ աղաները: Ջարդերը սպաննեցին այդ սրտե-
ռանդ թռիչքը: Բոլոր գալառներուն մէջ: Ինը հարիւրին,
ուխտագնացութիւնը խափանուած պաշտամունք մըն էր
բացի Արմաշէն, որուն նախկին վանահայրը, այդ շրջա-
նին Պոլսոյ պատրիարք, յաջողեցաւ կերպ մը գտնել հան-
րային հետաքրքրութիւնը վառ պահելու Չարխափանի
պատկերին շուրջը, նոյն ատեն ապահովելով գնացքին
կարեւորութիւնը: Կեսարացին անծանօթ չէր այն հրաշք-
ներուն, որոնք ամէն տարի կը կատարուէին Արմաշու
տաճարին մէջ, - ընդհանրապէս՝ կապուած անդամներու,
լեզուներու փականքին արձակումով: Խուլներն ու կոյ-
րերը: Այդպէս կը վկայէին «Իլուր աշխարհի» Պոլսոյ թեր-
թերը ու նորընծայ քահանան, որ դպրեմանքի աշակեր-
տութիւնը իր նոր ասպարէզին համար շահագործել կը
տենչար:

Հաճի Մարութէ աղան, նման ամէն կեսարացիի,
չփախցուց առիթը: Պիտի դնէր իր տղան ընկեր, դէպի
Արմաշ Մաթիկին ուղեւորութեան: Այս որոշումին մէջ
անիկա ունէր գործնական նպատակներ: Մէկ ամիս ճամ-
բորդութիւն, իր կարծիքով, աւելի կ'արժէր երեսունվեց
ամիս դպրոցէն: Աշխարհը ճանչնալու ամէնէն շիտակ ու
կարճ կերպը, ճանչնալ էր ոտքով, ձեռքով, աչքով: Մեղք,
որ իր գործերը կ'արգիլէին զինքը: Միւս կողմէն՝ անոր
հաւատքը խոր էր ամենակարող Սուրբ Կոյսին: Թող Չար-
խափանը անգամ մը նայէր հսկայ այդ երիտասարդին
ու ատիկա բաւական էր, որպէսզի հալէին անոր կապերը
հոգիէն ու լեզուէն: Խանդավառ, անիկա կարգադրեց
ճամբորդութեան թեքնիք պայմանները: Տղուն համար
հանեց օրինաւոր անցագիր: Մելիք օղլու Մատթէոսին հա-
մար ալ, բացի անցագրէն, «բերդի պէս» ամուր վկայա-
գիրը կառավարիչ պէյին: Հաճի Մարութէ աղային պապե-
նական «քէմերը» (գօտի) կաշեպատ, բայց ոսկեկուռ, ան-
ցաւ տղուն մէջքին: Ոսկին բախտ, առողջութիւն կը բերէ:
Ասիկա հաւատքն է ժողովուրդին: Հաղորդուեցաւ երի-
տասարդը մեկնումը կանխող Կիրակին: Ընդունեց ազ-